

ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ «ԱԿՕՍ» ԵՐԿԼԵԶՈՒ  
ՇԱԲԱԹԱԹԵՐԹՈՒՄ 1996-2007 ԹԹ.

*Բանայի բառեր – Հրանտ Դինք, «Ակօս» շաբաթաթերթ, ազգային ինքնություն, տարու, Հայոց ցեղասպանություն, Սփյուռք, ռասիզմ, ազգային փոքրամասնություն*

Արդեն տևական ժամանակ է, ինչ Թուրքիայում հասարակական և քաղաքական շրջանակներում առաջնային խնդիրներից է ինքնության հարցը: Դարեր շարունակ պետական մակարդակով իրականացվող ձուլման քաղաքականության հետևանքով Թուրքիայում այսօր առկա է խառնածին մի հասարակություն, որի տարբեր շերտերում ինքնության խնդիրը տարբեր կերպ է դրսևորվում: Այս առումով ուշագրավ է Թուրքիայում ինքնության խնդրի ծավալման և հավանական հանգուցալուծման վերաբերյալ Հրանտ Դինքի արտահայտած հետևյալ կարծիքը. «Եթե մի օր Թուրքիան քանդվի, ապա դա կլինի ոչ թե զենքի միջոցով, այլ ինքնության խնդրի»<sup>1</sup>: Ինքնության խնդիրը հատկապես նկատելի է Թուրքիայի հայության մեջ, որի հանդեպ ձուլման քաղաքականությունը առավել դաժանորեն է դրսևորվել:

Իսկ ե՞րբ է բարձրանում ինքնության հարցը: Այս առնչությամբ տեղին է հղել ֆրանսահայ գրող և քննադատ Գրիգոր Պլտյանին. «Ինքնութիւնը հարցաքննել, զայն արդէն կորսնցնել է, սակայն զայն հարցադրել կը նշանակէ տակաւին կառչիլ անոր, թէ ոչ արդէն շատոնց կը դադրինք հարցադրել: Այլ խօսքով՝ ինքնութեան մասին խօսքը կու գայ կորուստէ մը, առանց որ այդ կորուստը կորսուած ըլլայ բոլորովին»<sup>2</sup>:

Յուրաքանչյուր հայկական համայնք ենթակա է տեղական հայակու պայմաններին, ինչի դեպքում վտանգվում է ազգային ինքնությունը, իսկ ինքնության գաղափարը այս պարագայում ստանում է խիստ կարևոր նշանակություն. հատկապես Թուրքիայում հայ ազգային ինքնության բնատիպը կորցնելու վտանգը մշտապես շատ մեծ է եղել: Ուստի տարբեր լծակների և հարթակների բացակայության պարագայում պոլսահայ մամուլին վերապահվում է բացառիկ դեր՝ զորավիզ լինելու հայկական ինքնության պահպանմանը կամ վերագտնումին. այն դառնում է հասարակական կյանքի

<sup>1</sup> Այս միտքը նա հայտնել է 2007 թ. ԱՄՆ-ում հայ համայնքի հետ հանդիպման ժամանակ:

<sup>2</sup> Պլտյան Գ., Ինքնութեան փորձառութիւն Սփիւռքի մէջ // Ինքնութեան հարցեր, Երևան, 2002, էջ 90:

կազմակերպման այն ասպարեզը, ուր կենտրոնանում են հայ մտավոր-հասարակական ուժերը:

Բարդ ու հակասական որոնումների պայմաններում «Ակօս»<sup>1</sup> շաբաթաթերթը նորովի է գնահատում ինքնության հետ կապված խրթին և բազմաուղորտ հարցը: Հայ ինքնության գիտակցման և որակների պահպանման գործում պարբերաթերթն առաջին իսկ համարից նպատակային և հետևողական ուղեգիծ է որդեգրում և իբրև չափանիշ ընտրում է ազգային ինքնության վերագտնումի և վերարժևորման, ինքնաճանաչման ու ինքնապաշտպանության սկզբունքները, որոնք, կարելի է ասել, հիմք են դնում մի շարժման, որի սահմանները այնուհետև խորացնում են և ընդարձակում:

Այդ առումով «Ակօս»-ի առաջին «հոչակագիրը» թեև ընդհանրացնող կողմեր ուներ, սակայն պարունակում էր այն հիմնական սկզբունքները, որոնց վրա խոյանալու էր նրա հետագա գործունեությունը. «Լոյս կը տեսնենք, որպէսզի մենք մեզ անսխալ ծանօթացնենք... Ըսել կ'ուզենք, որ մենք ձեզմէ տարբերութիւն չունինք, մենք ալ ձեզ նման մարդիկ ենք, կ'ապրինք ձեր պայքարին մէջ, ձեր ցաւերն ու հարցերն են, կը խնդանք՝ երբ դուք կը խնդաք, կը յուզուիք, ձեզմէ տարբեր չենք: Միակ տարբերութիւնը որ կայ, մեր եկեղեցին է ու մեր լեզուն: Այդ պատճառաւ ալ, մեզ իրարմէ տարբեր ցոյց տուողներուն ծուղակը մի՛ իյնաք: Այս թերթը յարձակելու համար, կամ ալ կարգ մը իրաւունքներ պահանջելու համար չէ որ լոյս կը տեսնէ: Այս լրագիրը պարզապէս իր ինքնութիւնը, ինքզինք պաշտպանելու համար է որ լոյս կը տեսնէ»<sup>2</sup>:

Հայ ազգային ինքնության բարդ խնդիրների նկատմամբ շաբաթաթերթը նախընտրում է հեղափոխական մոտեցում, որի մասին Հ. Դինքը գրում է. «Հայ ինքնութիւնը պէտք ունի նոր նախադասութիւններու»<sup>3</sup>: Այդ փնտրտուքի մեջ կարևոր տեղ էր հատկացվելու պատմական փաստերն անկողմնակալ և խորքային ներկայացնելուն, որը Թուրքիայի պարագայում ձեռք էր բերում մեծ նշանակություն, քանի որ պետության կողմից իրականացվող ազգային քաղաքականությունն արդարացնելու նպատակով թուրքական պատմագրությունը տասնամյակներ շարունակ իր հասարակությանն է ներկայացրել կեղծ, պատմական անցյալը խեղաթյուրող տեղեկություններ: Ընտրելով պատմության «հիշողությունն» արթնացնելու ուղին՝ Հ. Դինքը «Մենք մոռնալու կարիքը ունինք» կարգախոսով առաջնորդվողներին լուրջ չէր համարում, քանի որ գիտակցում էր, որ ճշմարիտ ուղին ոչ թե մոռանալն է, այլ հիշելը: Այս մասին նա գրում է. «Պէտք է որ բոլորս ջանանք խնդիրներուն խորքին

---

<sup>1</sup> «Ակօսը» պոլսահայ համայնքի մամուլի պատմության մեջ առաջին հայերեն-թուրքերեն շաբաթաթերթն է, որը հիմնադրվել է 1996 թ. Հրանտ Դինքի կողմից, ով եղել է թերթի գլխավոր խմբագիրը մինչև իր մահը՝ 2007 թ.:

<sup>2</sup> Թերթերը՝ մեր հայելին // «Ակօս», 25.10.1996:

<sup>3</sup> **Տինք Հ.**, Հայ ինքնութիւնը պէտք ունի նոր նախադասութիւններու // «Ակօս», 9.02.2007:

թափանցել, ճշմարտություններուն հասնիլ»<sup>1</sup>: Իսկ Թուրքիայում, անժխտելի է, որ 1923 թ. հանրապետության հռչակումից ի վեր արգելվել է պատմական հիշողության, այն է՝ անցյալի իրադարձություններին առնչվող ստույգ, իրականությանը համապատասխանող տեղեկությունների փոխանցումը: Այդ տաբուն կոտրելը թեև բարդ, բայց հույժ կարևոր խնդիր էր:

Հայ ինքնության առումով «Ակօս»-ի գործունեությունը կարելի է պայմանականորեն բաժանել երկու ուղղության: Առաջինը վերաբերում է ազգային արժեքները, մշակույթը ճանաչելուն: Անհրաժեշտ է հրատարակել հայ նշանավոր գրողների ստեղծագործությունները, ազգագրական նյութեր՝ որպես հայեցի դաստիարակության կարևոր միջոցներ: Այդ նպատակով «Ակօս»-ը անդրադառնում է հայ մշակույթի այնպիսի դեմքերի, ինչպիսիք են Կոմիտասը, Խրիմյան Հայրիկը, Պարույր Սևակը, Պետրոս Դուրյանը, Երվանդ Օտյանը, Գրիգոր Զոհրապը, Եղիշե Չարենցը և այլք: Նման ընտրությունը պատահական չէ, քանի որ շարժաթաթերթը, ընթերցողին ծանոթացնելով մշակութային արժեքներին, մշակույթի նշանավոր դեմքերին, դառնում է ազգային ինքնության արտահայտիչը:

Հայ ազգային ինքնության առումով «Ակօս»-ի երկրորդ և կարևոր ուղղությունը տարբեր դարերում և հատկապես 1915 թ. Հայոց ցեղասպանության տարիներին և դրանից հետո բռնի իսլամացված հայերի<sup>2</sup> և նրանց սերունդների արմատների փնտրություն է:

Սկսած առաջին իսկ համարներից՝ Հ. Դինքը «Հայ ինքնության շուրջ» ընդհանուր խորագրի ներքո սպագրում է հողվածաշար, որտեղ լայն քննության նյութ է դարձնում իսլամացված հայերի ծագման և ինքնության խնդիրը: Նրան հաջողվում է դիտարկել ազգային ինքնության խնդիրը նոր տեսանկյուններից և ձևերով, կատարել էթնոհոգեբանական, փիլիսոփայական և պատմական լայն ընդհանրացումներ: Նա մի ամբողջ ծրագիր է ներկայացնում սեփական ազգային ինքնության հետ առերեսվելու, ծանոթանալու, ազգայինը յուրացնելու ուղղությամբ:

«Ակօս»-ը բազմաթիվ առիթներով անդրադառնում է իսլամացված հայերի առանձին ուշագրավ պատմություններին, որոնք նախկինում երբևէ լուսաբանված չեն եղել, և այդ գործում հատկապես մեծ է Հ. Դինքի գործոնը: Նա բազմաթիվ հողվածներ է հրապարակում իսլամացված հայերի ամենատարբեր խնդիրներին՝ այդ հարցում որդեգրելով հետևողական դիրքորոշում: Իսլամացված հայության թեմայով Դինքի հեղինակած հողվածները, փաստորեն, դառնում են «Ակօս»-ի կարևոր ուղղություններից մեկը: Դինքն այնքան է տարվում այդ թեմայով, որ հանդիպումներից մեկի ժամանակ անգամ նշում է. «Երանի գիտնական լինեի և միայն այս թեմայով զբաղվեի»<sup>3</sup>:

<sup>1</sup> Dink H., Tercih “Tehcir” oluncu // “Agos”, 12.06.1998.

<sup>2</sup> Սյս մասին մանրամասն տե՛ս «Հաշիները տակնուվրայ...» // «Ակօս», 29 ապրիլ 2005:

<sup>3</sup> «Օրակարգ» (Գլենդել), 10.01.2007:

Շաբաթաթերթը լայն կապեր է հաստատում հայ ազգային ինքնությունը վերագտնելու ցանկություն ունեցողների հետ՝ դառնալով նման մարդկանց իրական ինքնությունը ճանաչելու ամենագործուն և կենսական միջոցը: Անդրադառնալով իսլամացված հայության խնդրին՝ Դինքն այն ավելի ընդգրկուն է ներկայացնում՝ փորձելով դա դիտարկել ընդհանրապես Թուրքիայում տեղի ունեցող «ինքնության ճգնաժամի» համատեքստում. «Այսօր Թուրքիայում շատերն են դեգերում իրենց ինքնության լաբիրինթոսում՝ ապրելով «ինքնության ճգնաժամ»<sup>1</sup>: «Թուրքիոյ մէջ այսօր հազարաւորներ կան որ քաջութիւն ունին հրապարակաւ արտահայտուելու, գիրքեր ու յօդուածներ գրելու, թէ իրենց պապերը հայ էին: Թուրքիոյ մէջ հիմա այս ուղղութեամբ շարժում կայ եւ ես ըսեմ որ ապագայ հայ կեանքի ամենամեծ ու ամենաշուսալի աշխատանքներէն մէկը կրնայ դառնալ անիկա: Եթէ Թուրքիան Եվրոմիութեան անդամ դառնայ օր մը, չեմ սխալիր, եթէ հայութիւն առնուազն երկու միլիոն ևս շատանայ Թուրքիոյ մէջ գոյութիւն ունեցող իսլամ հայերու թիւը: Ինծի համար շատ կարևոր հարց է այս հարցով աշխատիլ և գտնիլ այդ կորսուածները, ողջնցնել այդ մեռածները: Շատ կարևոր է գտնել այդպիսի հայ մը եւ իրեն տալ իր հայութիւնը»<sup>2</sup>: Այս մասին «Պատմութեան եւ Այսօրուան Հայելիէն Հեմշինի Հայերը» գրքի հեղինակ Ալիե Ալթը գրում է. «Երբ մարդոց լուծիւնները կամաց-կամաց կը սկսին տեղի տալ, երբ մարդիկ իրենց պապերը կը փնտռեն ու մեծմայրերու ինքնութիւնը կը հրապարակեն, իրենց Մահմետական չըլլալը բարձրաձայն կ'աղաղակեն եւ իրենց արմատներուն հասնելու հետամուտ մարդոց թիւը երբ օրըստօրէ կ'աւելանայ, իրենց կեանքը ստուերներու պէս շարունակել ջանացողներուն պատմութիւններն ալ հետզհետէ յաջորդաբար կը սկսին լոյս աշխարհ գալ»<sup>3</sup>:

Այսպիսով Հրանտ Դինքը «Ակօս»-ում սկիզբ է դնում իսլամացված հայերին իրենց արմատներին վերադարձնելու հարցը Թուրքիայի քաղաքական և հասարակական օրակարգ մտցնելու գործընթացին, որը լիովին նոր երևույթ էր և մինչ այդ դուրս էր մնացել այլ պարբերականների ուշադրությունից: Մա իրականում բավական համարձակ քայլ էր Թուրքիայում, քանի որ այդ երկրում տաբու թեմաների թվում առանձնահատուկ տեղ ունի ինքնության հարցը: Շաբաթաթերթի էջերում «թաքնված» հայի իրական ինքնությունը ներկայացնող նյութերը թուրք հասարակության մեջ սկսեցին ավելի խորացնել կասկածները սեփական ինքնության վերաբերյալ:

«Ակօս»-ում հրատարակված պատմություններից մի քանիսը լայն տարածում գտան՝ դառնալով հանրային քննարկման առարկա, իսկ երբեմն նույնիսկ գիրք-հուշագրությունների հիմք: Դրանցից ամենահայտնին իրավապաշտպան Ֆեթիյե Չեթինի և նրա հայուհի տատի պատմությունն է.

<sup>1</sup> **Dink H.**, Bu köşedeki adam, İstanbul, 2009, s. 257.

<sup>2</sup> **Տինք Շ.**, Հայ ինքնութիւնը պէտք ունի նոր նախադասութիւններու // «Ակօս», 9.2.2007:

<sup>3</sup> Դաւանափոխութիւնը ընդունիլ... // «Ակօս», 9.6.2006:

«Ակօս»-ի 2000 թ. փետրվարի 11-ի համարում տեղ էր գտել հետևյալ մահազոդը. «Նրա անունը Հերանուշ էր: Հերաբեթ Կատարյանի թոռնուհին էր, Իսկուհի և Օվաննես Կատարյանների միակ աղջիկը: Բալուի Հաբաբ գյուղում մինչև չորրորդ դասարանը երջանիկ մի մանկություն է ապրել: Միանգամից վրա են հասել տառապանքներով լի ժամանակներ, որոնց մասին նա ասում էր. «Այդ օրերը թող գնան, այլևս ետ չգան»: Հերանուշն իր ամբողջ ընտանիքը կորցրեց, նրանց հետ այլևս չկարողացավ հանդիպել: Նոր ընտանիք, նոր անուն ունեցավ, կյանքի ընթացքում այդ բոլորից ընդհանրապես չբողոքեց, սակայն իր անունը, գյուղը, մորը, հորը, պապին և մտերիմներին երբևիցե չմոռացավ: Մի օր նրանց հանդիպելու, նրանց հետ ողջագուրվելու հույսով 95 տարի ապրեց: Գուցե այս հույսով այդքան երկար ապրեց, գիտակցությունը մինչև վերջին օրերը չկորցրեց: Հերանուշ տատիկս անցյալ շաբաթ վախճանվեց և նրան դեպի հավիտենականություն ճանապարհեցինք: Նրա հարազատներին (մեր հարազատներին), որոնց իր կենդանության օրոք չենք կարողացել գտնել, հույս ունենք այս հայտարարության միջոցով գտնել, վշտերը կիսել և ասում ենք. «Այդ օրերը թող գնան, այլևս չկրկնվեն»<sup>1</sup>: Ֆ. Չեթինի տատը՝ Հերանուշ Կատարյանը, այն իսլամացված հայերից էր, ովքեր 1915 թ. Հայոց ցեղասպանության ժամանակ ապաստան էին գտել մուսուլմանական ընտանիքներում և ժամանակի ընթացքում իսլամացվել էին: Նրանք փոխել են իրենց անունը, կրոնը և այդպես շարունակել իրենց գոյությունը: «Ակօս»-ի միջոցով Ֆ. Չեթինը ամիսներ անց կարողացավ գտնել իր տատի ամերիկաբնակ հարազատներին, ամբողջացնել Կատարյան ընտանիքի եղեռնյան պատմությունը և այն թղթին հանձնել: Արդյունքում 2004 թ. Ստամբուլում հրատարակվեց «Մեծ մայրս» վերնագրով հուշագրությունը<sup>2</sup>, որը Թուրքիայում դարձավ ամենամեծ պահանջարկ ունեցող գրքերից մեկը, ապա թարգմանվեց տարբեր լեզուներով<sup>3</sup>: Առանց չափազանցության կարելի է ասել, որ «Մեծ մայրս» գիրքը շրջադարձային նշանակություն ունեցավ Թուրքիայում էթնիկ ինքնության քննարկումների ասպարեզում՝ դրդելով շատերին բարձրաձայնելու իրենց հայկական ինքնության մասին կամ սկսելու փնտրտուքներ:

Դինքը և նրա միջոցով նաև «Ակօս»-ը հետզհետե ընդլայնում են հայկական ինքնության տեսական քննարկման ոլորտը, անդրադառնում Թուրքիայում փոքրամասնություններին և առավել կոնկրետ քրիստոնյա հայ համայնքի խնդիրներին: Այս հարցում իրավացիորեն առաջնային քննարկման և քննադատության նյութ է դառնում թուրքական պետական քաղաքականության հետևանքով առաջացած վախի մթնոլորտը: Սակայն պարբերաթերթը

<sup>1</sup> Çetin F., *Anneanem*, İstanbul, 2004, s. 77.

<sup>2</sup> Çetin F., *Anneanem*, İstanbul, 2004.

<sup>3</sup> Գիրքը երկու անգամ արևելահայերենով հրատարակվեց Հայաստանում 2006 և 2008 թվականներին (Չեթին Ֆ., Մեծ մայրս, թարգմանությունը՝ Ռուբեն Մելքոնյանի, Երևան, 2006):

առաջնորդվում է այն ճշմարտությամբ, որ թեև վախճ «փոքրամասնութեան մը ամենահզօր ու բնական զենքն ու իրաւունքն» է, սակայն պէտք չէ «իրենք զիրենք փոքրամասնութիւն ըլլալով տեսնել՝ այդ զենքին դիմել»<sup>1</sup> և վարել երկչոտ քաղաքականություն: Այս մոտեցմամբ «Ակօս»-ը չի խուսափում համարձակ քննադատական վերլուծություններից՝ անտեսելով նույնիսկ «պետութեան գայրոյթը»: «Իրաւ որ, մեր ինքնութեան պահպանութեան ժամանակ, եթէ ըլլան գայրացողներ, այդ իրենց հարցն է: Մենք ինքնապաշտպանութեան եւ իրականութիւնները ցոլացնելու ջանք կը թափենք,– գրում է Հ. Դինքը,– ես ալ կը գայրանամ, երբ ամէն անգամ հեռատեսիլը բանալով «Հայու լակոտ» եւ նման խօսքերու կամ ՓՔՔ-ի հետ մեր յարաբերութիւններու մասին լուրեր կը լսեմ: Եթէ գայրոյթը այնքան կարեւոր հարց է, եկէք եւ այս հարցերը, ցաւերը միատեղ ապրինք, ու քիչ մըն ալ դուք գայրացէք»<sup>2</sup>:

Թուրքիայի Հանրապետությունում փոքրամասնությունների նկատմամբ իշխանությունների սերմանած թշնամանքը չէր կարող անհետանալ մնալ: Թուրք ժողովրդի գիտակցության մեջ փոքրամասնությունները ընկալվեցին որպէս «իրավագուրկ օտարներ»: Հ. Դինքը, սակայն, փորձում է «փոքրամասնություն» եզրույթին տալ փոքր-ինչ խորհրդանշական բնույթ՝ այն չընդգրկելով էթնիկ-կրօնական շրջանակների մեջ, և նրա համոզմամբ՝ Թուրքիայում «խորքին մեջ բոլորն էլ փոքրամասնություն են»: Այս մասին նա գրում է. «Ճիշդ է. բոլորս փոքրամասնութիւն ենք: Օրինակ՝ փոքրամասնութիւններուն համար իրաւունքի հարց մը խնդրոյ առարկայ կ'ըլլայ. «Յակոբին կայ, Միշոյին կայ, մեզի չկայ» ըսելով աղաղակ կը բարձրացնեն Իսլամական թերթերը: Հոն կը շշմիմ: Այս երկրին մեջ իմ կողմէ մեծամասնութիւն նկատուած հատուածն ալ խորքին մեջ ինծի պէս հարցեր ունի: Այսինքն՝ մեզմէ միայն մէկուն հարցին լուծում գտնելը՝ համատեղ ապրումի բարոյականի տեսակէտով ճիշդ ձեւ մը չէ եւ ո՛չ մէկուն օգուտ կը պատճառէ: Ասիկա ալ միակ բառով մը կը բացատրուի. – Ժողովրդավարութիւն»<sup>3</sup>:

Հայերի շրջանում տարածված վախի մթնոլորտի հաղթահարման ուղղությամբ Հ. Դինքի քայլերին «Ակօս»-ի խմբագրականը հետևյալ կերպ է անդրադառնում. ««Փողոցը երբեք Հայերէն մի՛ խօսիր: Երբ դուրսը կը գտնուիս, վզդ կախուած Խաչը ծածկէ՛, որոշ հեռաւորութեան մեջ կեցիր եւ Թրքութեան վերաբերեալ հարցերու մի՛ միջամտեր, երբեք առաջին կարգերու վրայ տեղ մի՛ գրաւեր, եթէ Հայութեանդ պատճառաւ ստորագնահատուիս՝ մի՛ գանգատիր եւ ընդհակառակն՝ լռէ՛: Տարբեր բացատրութեամբ մը անտեսանելի եղիր»: Հայերը, մինչեւ կարճ ժամանակ մը առաջ՝ Թուրքիոյ Հանրապետութեան մեջ իսկապէս ալ անտեսանելի դիրք մը կը ներկա-

<sup>1</sup> Արձագանգ Թուրք Մամուլի մէջ // «Ակօս», 10.12.1999:

<sup>2</sup> Թերթերը՝ մեր հայելին // «Ակօս», 25.10.1996:

<sup>3</sup> **Տինք Հ.**, Խորքին մէջ բոլորս փոքրամասնութիւն ենք // «Ակօս», 21.10.2005: Տե՛ս նաև Azinlik içinde azinlik olmak // “Agos”, 24.08.2007:

յացնէին: Այս աստիճան նուաստ եւ անշուք կ'ապրէին: Եթէ այս երեւոյթը փոխուեցաւ, ասոր մէջ մասնաւորապէս անձի մը կողմէ հրատարակուած երկլեզու շաբաթաթերթ «Ալօս»-ի հրատարակիչ Հրանդ Տինքի բաժինը մեծ է»<sup>1</sup>: Վերջին ձևակերպումը փոքր-ինչ ուռճացված է, և վիճակը ներկայացված է առավելապէս ցանկալիի, քան թէ իրականութեանը համապատասխանող դիրքերից, քանի որ հայկական համայնքում ներկայումս ևս գերիշխող են վախի մթնոլորտը և դրանից բխող ծայրահեղ զգուշավորությունը:

Թուրքիայում հայկական ինքնութեան խնդրին անդրադառնալիս «Ալօս»-ը և Հ. Դինքը իրավացիորեն հատուկ շեշտադրում են կրթական համակարգում թուրքական իշխանությունների որդեգրած քաղաքականությունը, այն է՝ դպրոցից արմատախիլ անել ազգային ինքնութեան դրսևորման և ծավալման փորձերը: Այսպէս, Հ. Դինքը նկատել է տալիս, որ Թուրքիայում ազգային փոքրամասնությունների հանդէպ անհանդուրժողական քաղաքականությունը կարելի է տեսնել նույնիսկ դպրոցական դասագրքերում, որտեղ խոսք անգամ չկա ազգային փոքրամասնությունների մասին: Սրա վերաբերյալ նա բերում է հետաքրքիր օրինակ. ««Ալի՛, գնդակը Այշէին տու՛ր», կամ՝ «Այշէ՛, գնդակը Ալիին տու՛ր»: Երբեք չի հանդիպում «գնդակը տու՛ր Հակոբին, Դելալին կամ Հրիստոյին»: Փողոցում, բակերում, շրջապատում այս մարդիկ ընդհանրապէս չկան»<sup>2</sup>:

Թուրքիայում յուրաքանչյուր աշակերտ իր դպրոցական օրն սկսում էր «աշակերտական երդումով», որտեղ, անկախ այն բանից աշակերտը հայ է, հրեա, հույն թէ քուրդ, ստիպված է արտասանել «թուրք եմ, ճշմարիտ եմ, աշխատասեր եմ» արտահայտություններով սկսվող, և «ինչ երջանիկ է նա, ով ասում է՝ ես թուրք եմ» բանաձևով վերջացող ուխտը: Իսկ նրանք, ովքեր «ես թուրք եմ»-ի փոխարեն «ես քուրդ եմ կամ հայ եմ» արտահայտությունն են օգտագործում, պատժվում են<sup>3</sup>:

*“Türküm, doğrucuyum, çalışkanım.  
İlkem; küçüklerimi korumak, büyüklerimi saymak,  
yurdumu, milletimi özümünden çok sevmektir.  
Ülküm; yükselmek, ileri gitmektir.  
Ey büyük Atatürk! Açtığın yolda, gösterdiğin hedefe  
durmadan yürüyeceğime ant içerim.  
Varlığım, Türk varlığına armağan olsun.  
“Ne mutlu Türküm diyene!”<sup>4</sup>.*

<sup>1</sup> «Ալօս», 19.5.2006:

<sup>2</sup> **Dink H.**, İki yakın halk iki uzak komşu, İstanbul, 2008, s. 26-27. Տե՛ս նաև՝ **Dink H.**, Yaşamın sürdürülebilirliği mi? // “Agos”, 14.06.1996:

<sup>3</sup> <http://arevelkcenter.com/archives/2468>.

<sup>4</sup> <http://istanbul.meb.gov.tr/upload/istanbulders/ogrenci3s1.pdf>.

*«Ես թուրք եմ, ճշմարիտ եմ, աշխատասեր եմ:  
Սկզբունքս է՝ փոքրերիս պաշտպան լինել,  
Մեծերիս հարգել, պետությունս, ազգս ինձնից առավել սիրել:  
Գերագույն նպատակս է՝ բարձրանալ և առաջ գնալ:  
Հե՛ն, մե՛ծն Աթաթուրք, երդվում եմ անդադար քայլել  
Քո գծած ուղիով, որ տանում է դեպի Քո մատնացույց արած նպատակը:  
Թո՛ղ դ իմ գոյությունը նվիրաբերվի թուրքի գոյությանը:  
Ի՛նչ երջանիկ է նա, ով ասում է՝ ես թուրք եմ»:*

Պոլսահայ լրագրող Ալին Օզինյանը նկատում է, որ հայկական վարժարաններում այս երդումը շատ ավելի խիստ է կիրառվում, չնայած բոլոր աշակերտները և ուսուցիչների մեծ մասը հայեր են: Նույնը վերաբերում է հունական ու հրեական վարժարաններին: Նույնիսկ ծնողական ժողովները սկսում էին այդ երդման արտասանությամբ, և ծնողներին ևս վերահսկում էին նույն ձևով: Փաստորեն, էթնիկապես ոչ թուրք աշակերտների դպրոցական յուրաքանչյուր օր սկսվում է իրավունքների ոտնահարումով, թեև Հ. Դինքը նկատել է տալիս. «Իրավո՞ւնք: Նման բան չկա: Այս երկրում ամեն հայրենակից թուրքերի հետ հավասար իրավունքներ չի կարող ունենալ»<sup>2</sup>:

Զինվորական քայլերգ հիշեցնող աշակերտական երդման մասին Հ. Դինքը գրում է երիտթուրք պարագլուխ Ջեմալ փաշայի թոռանը՝ հայտնի լրագրող Հասան Ջեմալին. «Սիրելի Հասան Ջեմալ, 14.12.2002-ին «Մազլում դեր»-ի Ուրֆայի մասնաճյուղի նախագահության կազմակերպած նիստին հրավիրվել էի որպես բանախոս: Ելույթիցս հետո անցանք ներկաների հարցերին: Ինձ ուղղված հարցերից մեկն այն էր, թե արդյոք հայկական դպրոցներում արտասանվում է՝ «Թուրք եմ, ճշմարիտ եմ, աշխատասեր եմ» երդումը, և եթե, այո՛, ապա այդ պահին ինչ եմ զգում:

Ես հետևյալն ասացի.

«Աշխատասեր եմ, ճշմարիտ եմ» բառերը շատ եմ սիրում և բղավելով արտասանում եմ: Իսկ «թուրք եմ» հատվածն ասելիս ձգտում եմ այն ընկալել որպես «թուրքաբնակ»: Ես թուրք չեմ, թուրքաբնակ եմ: Թուրքիայի Հանրապետության քաղաքացի եմ և հայ եմ»<sup>3</sup>:

Թուրքիայի հայկական և հունական դպրոցներում աշխատած ուսուցիչներից էմեն Քեշմերը, որը նաև «Մի տոպրակ Ստամբուլի հող» վերտառությամբ գրքի հեղինակն է<sup>4</sup>, նշում է, որ «թուրք եմ, ճշմարիտ եմ, աշխատասեր եմ» արտահայտությունը ոչ թուրք աշակերտներին արտասանել պարտադրելն ինքնին պետականորեն իրականացվող ազգայնամոլական քաղաքականության դրսևորում է: Նա «Ակօս»-ին տված իր հարցազրույցում նշում է, որ

<sup>1</sup> **Օզինյան Ա.**, Ոչ այլևս թրքության երդում ([http://civilnet.am/alin\\_ozinian\\_turkish\\_oath](http://civilnet.am/alin_ozinian_turkish_oath)): Տե՛ս նաև **Dink H.**, Türkiyeli olmak // “Agos”, 12.10.2003:

<sup>2</sup> Իրատունք Ունիս. Բայց Դուն Տարբեր ես // «Ակօս», 1.08.1997:

<sup>3</sup> **Cemal H.**, 1915: Ermeni Soykırımı, İstanbul, 2012, s. 9-10.

<sup>4</sup> **Keşmer E.**, Bir Poşet İstanbul Toprağı, İstanbul, 2012.



իրենք՝ թուրքերը, միշտ հպարտանում են, որ աշխարհում միայն իրենք են, որ ապրիլի 23-ին տոնում են երեխաների օրը: Բայց միաժամանակ նրանք այդ օրը երեխաներին սովորեցնում են այնպիսի բանաստեղծություններ, որոնք ատելություն են սերմանում իրենց «երկրի թշնամիների» հանդեպ<sup>1</sup>:

Այս թեմայի շուրջ ոչ թուրք քաղաքացիների կողմից օրեցօր թեժացող բողոքներն ի վերջո թուրքական իշխանություններին ստիպեցին 2013 թ. վերացնել այդ հարկադրանքը: Այդ պայքարում առաջնային դեր էր ստանձնել նաև «Ալօս»-ը, որի էջերում պարբերաբար քննարկվում ու քննադատվում էր ծայրահեղ խտրական «աշակերտական» այդ երգումը: Մակայն իրատես լինելու համար պետք է նշել, որ այդ հարցում էական դեր խաղաց բազմամիլիոնանոց քուրդ ազգաբնակչության ընդվզումը և՛ հասարակական, և՛ քաղաքական, և՛ իրավական հարթություններում:

Նկատենք, որ նմանատիպ ազգայնամոլական շեշտադրումներ ունի նաև Թուրքիայի Հանրապետության պետական օրհներգը, իսկ քրեական օրենսգրքով որոշակի պատիժ է սահմանված օրհներգից շեղումների դեպքում: Հ. Ջեմալին ուղղված վերոհիշյալ նամակում Հ. Դինքը անդրադառնում է նաև օրհներգին և փոքրամասնությունների շրջանում դրա առաջացրած ընկալումներին. «Անդրադարձա մեր ազգային օրհներգի «Իմ հերոս ռասային ժպտա» տողին և խոստովանելով, որ ռասա բառի շեշտադրումից անհանգստություն եմ զգում՝ հետևյալն ասացի.

«Մանկությունիցս ի վեր ձեզ հետ միասին երգում եմ Անկախության օրհներգը: Մակայն վերջին ժամանակներս մի տող կա, որին հասնում եմ թե չէ՝ արգելակվում եմ: Ես լռում եմ, իսկ դուք շարունակում եք, և հետո միայն ես միանում եմ շարունակությանը. «Հերոս ռասայիս ժպտա»...

«Ռասա», «իմ նախնին», «հերոս»: Այսինքն՝ մինչև հիմա ազգային օրհներգում քաղաքացիություն հասկացությունը, ազգային միասնությունը դեռ ռասայով, հերոսական մի ռասայով ենք ձգտում ապահովել: Ռասա բառը բացարձակապես չի ներդաշնակում ազգային օրհներգին, բացահայտ անջատողականության և ռասիզմի ենք դիմում: Անջատողականության ենք դիմում, քանի որ այս երկրում բոլորս նույն ռասայից չենք: Թուրք կա, հույն կա, քուրդ կա, հայ կա:

Նույն տողը նույն պահին երգելով՝ իրականում մենք բոլորս մեր ռասան ենք նկատի ունենում: Սրանից ավելի բացահայտ ռասիզմ և անջատողականություն հնարավոր է»<sup>2</sup>:

«Ռասայական խտրականություն», ինչպես նաև՝ «թուրքիացի»<sup>3</sup>, արտահայտությունների առաջադրման համար Հ. Դինքի դեմ քրեական գործ

<sup>1</sup> <http://www.agos.com.tr/mudur-dediggin-okulu-gozetler-2107.html>

<sup>2</sup> Cemal H., նշվ. աշխ., էջ 10:

<sup>3</sup> Այս եզրույթը նա կիրարկում էր միայն Թուրքիայի՝ ազգությամբ ոչ թուրք քաղաքացիների պարագայում:

հարուցվեց «Թուրքականությունը վիրավորելու» մեղադրանքով:

Ինքնությանը վերաբերող հաջորդ խնդիրը, որը դարձավ Դինքի և «Ակօս»-ի օրակարգային նյութ, վերաբերում էր Թուրքիայի իշխանությունների դեմ զինված պայքար մղող քրդական «Քրդստանի աշխատավորական կուսակցություն» (ՔԱԿ) ծայրահեղական կազմակերպության մարտիկներին հայկական ծագում վերագրելուն: 1980-1990-ականներից սկսած՝ թուրքական իշխանությունները հրապարակ նետեցին մի անհիմն թեզ, թե ՔԱԿ-ը հայկական կառույց է, և նրա անդամները ծպտյալ հայեր են: Այս անհեթեթությունը լայն տարածում գտավ նաև մամուլում և դարձավ հայությանը վիրավորելու, նրա ազգային ինքնությունը կաղապարելու ևս մեկ պատրվակ: Հայտնի է, որ թուրք ազգայնականների առաջնային թիրախը հայերն են, և հակաթուրքական որևէ երևույթի հետևում հասարակության մեծ մասը հաճախ տեսնում է հայերին: Թուրքական իշխանությունների և մամուլի հետևողական աշխատանքի արդյունքում այսօր Թուրքիայում ամենածանր վիրավորական արտահայտություններն են «գլավուր», «հայի բիճ», «հայի լաճ» բառերը<sup>1</sup>:

Թուրքական հասարակությանը բացատրություններ տալու նպատակով Հ. Դինքն իր ելույթներում ու հողվածներում հետևողականորեն առաջ էր տանում այն միտքը՝ փորձելով թուրք հասարակությանը բացատրել, որ հայերը ոչ մի առնչություն չունեն ՔԱԿ-ի հետ: Նրան հատկապես անհանգստացնում էր, որ Թուրքիայում արվում էր հնարավորը հայերին ՔԱԿ-ի հետ նույնացնելու համար: Այս մասին «Ակօս»-ում կարդում ենք. «Բայց իրականութեան մեջ անոնք ալ գիտեն, թե Հայերը ոչ մեկ աղերս ունին ՓՔՔ-ի կամ Քիւրտերու հետ: Այս ընթացքը կ'անհանգստացնէ մեզ, քանի որ կապրինք այս երկրին մէջ: Եթէ հոս պիտի ապրինք, ստիպուած ենք այս վարուելակերպին հետ ապրելու... Այսքան ստորացումի եւ արհամարհանքի փոխարէն եթէ մենք դեռ կը շարունակենք այս երկրին մէջ ապրիլ, պէտք է քիչ մը սպասել ու խորհիլ: Որովհետեւ մեր արմատները, եկեղեցիները, վարժարանները, ասանդութիւնները ու նաեւ մեր ապագան հոս են»<sup>2</sup>:

ՔԱԿ-ին որպես հայկական կառույց ներկայացնելու քարոզչության մեջ էական նշանակություն ուներ այն, որ 1997 թ. Թուրքիայի ներքին գործերի նախկին նախարար տիկին Մերալ Աքջեները նոր ոստիկանատան բացման ժամանակ ազգային միասնականության վերաբերյալ ելույթ ունենալիս խոսել է ՔԱԿ-ի առաջնորդ Աբդուլլահ Օջալանի մասին և հայտարարել. «Հայու վիժվածք դատարկապորտ մը Աբօ, չկրցաւ մեր ազգային միասնականութիւնը խախտել... մեր բազմաթիւ եղբայրները լեռ բարձրացնելով կը կարծէ թէ պիտի կարենայ այս երկիրը պառակտել»<sup>3</sup>:

<sup>1</sup> «Հայ մը, որ կը փնտռէ վերածնունդը» // «Ակօս», 26.04.2002:

<sup>2</sup> Փոքրամասնութեան «Գունաւոր» թերթերը // «Ակօս», 25.07.1997:

<sup>3</sup> Հատուածներ Թուրք մամուլի մէջ լոյս տեսած հակազդեցութիւններէն // «Ակօս», 4.04.1997, Հրապարակային ներողութիւն // «Ակօս», 4.04.1997:

Նրա այդ հայտարարությունից հետո, նաև շնորհիվ «Ակօս»-ի, Հ. Դինքի և նրա հետ արդեն համագործակցող թուրք հրատարակախոսների, մեծ աղմուկ բարձրացավ և թուրքական ու հայկական մամուլում հրատարակվեցին այդ մեղադրանքները քննադատող հոդվածներ: Հ. Դինքի ընդվզումը «Ակօս»-ի էջերում անդրադառնում էր նաև ինքնության խնդրին. «Ես Հա՛յ եմ եւ Հայրենասէր եմ: Ես չեմ ուզեր, որ իմ անունիս այլ անականներ կցուին: Այս երկրին քաղաքական կեանքին, ժողովրդավարութեան, միատեղ աշխատանքին, վերակազմութեան, ամէն բանին մէջ կ'ուզեմ ըլլալ: Ահա՛ իմ ինքնութիւնս»<sup>1</sup>:

Ուշագրավ է, որ այդ թեմային անդրադարձան նաև թուրքական մամուլի որոշ ներկայացուցիչներ, որոնց հոդվածները անմիջապէս տեղ էին գտնում «Ակօս»-ի էջերում: Այսպէս, թուրքական «Մաբահ» թերթի մարտի 20-ի համարում լույս տեսավ լրագրող Հրնջալ Ուլուչի հոդվածը. «Հայերը այս երկրին հայրենակիցները, այս ազգին, թուրք ժողովուրդին մէկ մասնիկը չե՞ն միթէ... Այս մարդիկ, որոնք գլխաւորութեամբ Հայաստանի՝ աշխարհի գրեթէ բոլոր երկիրներուն մէջ ազգականներ ունենալով՝ տէր են իրենց համար որեւէ հայրենիք մը ընտրելու, Թուրքիա չե՞ն բնակիր իբրեւ իրենց հարազատ հայրենիքը... Գիտէ՞ք այսօր թէ մեր շրթներէն անպակաս, ամէն առթիւ մեծ հաճոյքով երգուած սքանչելի երգերէն քանին «Հայու սերմ»-երու ստեղծագործութիւններն են»<sup>2</sup>: Հեղինակը նաև փաստում է, որ թուրքերը հոչակավոր Սուլէյմանիէներ, Սելիմիէներ մզկիթների մասին հպարտությամբ ասում են՝ «մերն է», սակայն իրականում դրանք հայերն են կառուցել:

Թուրքական «Յենի Յուզլըլ» թերթում տպագրվում է Յադմուր Աթսըզի «Ես իր անունով ներողութիւն կը խնդրեմ» խորագիրը կրող հոդվածը, որտեղ նա նշում է. «Հրամանատարուհի Մէրալ Ազշէներ իր խելքովը Աբօն նախատած ըլլալու համար գործածեր է «Հայու սերմ» ասութիւնը: Ես կ'անգիտանամ իրեն ինչի՞ սերմ ըլլալը, չեմ ալ ուզեր գիտնալ: Նման անարգ վերաբերում մը նողկանքով կը պարսաւեմ, քանի որ ան միեւնոյն ատեն մարդկային յանցանք մըն է: Այս նախատական խօսքերուն համար անոր հաշուոյն ներողութիւն կը խնդրեմ բոլոր Հայ հայրենակիցներէն...»<sup>3</sup>:

Ծավալված բողոքի և քննադատության ալիքը որոշակի արդյունք ունեցավ, և ապրիլի 1-ին հայ համայնքի ներկայացուցիչների հետ հանդիպման ժամանակ Մ. Աքշէները «ցավ» հայտնեց հայ հայրենակիցներին վիրավորելու համար: Այդուհանդերձ, նման դեպքերը Թուրքիայում բազմաթիվ են, իսկ դրանք պարսավողները քիչ:

<sup>1</sup> Պտոյտ մը «Ականուած Դաշտին» մէջ // «Ակօս», 26.12.1997:

<sup>2</sup> Նույն տեղում: Տե՛ս նաև “Sabah”, 29.03.1997:

<sup>3</sup> Հատուածներ Թուրք մամուլի մէջ լոյս տեսած հակազդեցութիւններէն // «Ակօս», 4.04.1997: Տե՛ս նաև “Yeni Yüzyıl”, 31.03.1997, “Radikal”, 30.03.1997, “Radikal”, 31.03.1997, “Sabah”, 30.03.1997, “Hürriyet”, 31.03.1997, “Radikal”, 1.04.1997:

Այդ դեպքը, սակայն, ինչպես նաև դրան հաջորդած զարգացումները «Ակօս»-ում շատ կարևոր մի նոր փուլ էին սկզբնավորում, որոնք հետագայում ծավալվելու էին: Սա առաջին քայլերից էր, որն ուղղակի կամ անուղղակի նպաստեց, որ հայկական թեմատիկան ընդլայնի իր սահմանները և, բացի թուրքահայ մամուլի զգուշավոր անդրադարձներից, իր որոշակի տեղը զբաղեցնի թուրքական մամուլում, և այս հարցում «Ակօս»-ի ու Հ. Դինքի դերը իրականում բավականին մեծ է: Ավելի ուշ նա կրկնելու էր և հստակեցնելու պարբերաթերթի հիմնադրման կարևոր նպատակներից մեկի մասին իր տեսակետը. «Խոսիլ հայութեան խնդիրներու մասին Թուրքիոյ հանրութեան առջեւ, իրենց հասկցած լեզուով, քանի որ, այդ օրերուն «Հայ» բառը հասած էր նոյնիսկ հայհոյանքի աստիճանին, ամէն օր, հեռուստակայաններու եւ թերթերու մէջ, քաղաքական անձնաւորութիւններու եւ մտաւորականներու բերնէն Հայուն հասցէին զանազան անարգանքներ եւ ամբաստութիւններ կ'ըլլային: Նաեւ մեր համայնքային կէտնքին մէջ, զազաթնակէտին հասած էր պետական ճնշումներուն ստեղծած դժուար կացութիւնը, երբ մեր ձեռքերէն կալուածները կ'առնուէին եւ դպրոցներու մէջ ճնշում կար: Այս կացութեան մէջ կը մտածէինք, թէ պէտք է Թուրքիոյ ժողովուրդին փոխանցենք մեր հարցերը եւ իրենց հասկցած լեզուով անոնց գիտակցութեան յանձնենք, թէ ի՞նչ տեղի կ'ունենայ եւ թէ ո՞վ է հայր: Մենք մեզ պաշտպանելու համար մէջտեղ եկած թերթ ենք»<sup>1</sup>:

«Ակօս»-ի հեղինակության աճի և ավելի լայն ներկայացվածության մասին է վկայում այն, որ թերթին սկսեցին ավելի հաճախակի աշխատակցել թուրք, քուրդ և այլ ժողովուրդների ներկայացուցիչ լրագրողներ ու հրապարակախոսներ: Նրանցից է նաև թուրք հայտնի հրապարակախոս Բասքըն Օրանը, ով բավական ակտիվ է նաև հասարակական-քաղաքական որոշակի ոլորտներում: Չնայած նա ոչ միանշանակ կերպար է և հայկական թեմատիկայի շուրջ արել է բավականին ադմկահարույց հայտարարություններ, կատարել թվացյալ «հայանպաստ», իրականում, սակայն, իշխանամետ քայլեր, այնուամենայնիվ թուրքական մամուլում նա որոշակի հեղինակություն է վայելում: «Ակօս»-ի էջերում նա սկսում է ինքնության հարցի շուրջ տեսական հարցադրումներ պարունակող հոդվածներ հրատարակել, որտեղ քննության նյութ է դարձնում Թուրքիայում տարածված «երկու ինքնությունների» կամ «վերին ու ներքին ինքնությունների» (üst kimlik, alt kimlik) թեման: Նկատենք, որ այդ թեմային անդրադարձել էր Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանը, ըստ որի՝ Թուրքիայի բոլոր քաղաքացիները «վերին ինքնությամբ» թուրք են, իսկ «ներքին ինքնությամբ» կարող են լինել հայ, քուրդ, արաբ և այլն: Բ. Օրանը, փաստորեն, կրկնում է վարչապետի մտքերը՝ նշելով, որ «վերին ինքնությունը» անձի՝ տվյալ երկրի քաղաքացիությամբ

<sup>1</sup> Տիսք Հ., Հայ ինքնությունը պէտք ունի նոր նախադասություններու // «Ակօս», 9.02.2007:

պայմանավորված սոցիալական ինքնությունն է<sup>1</sup>: Իսկ թուրքական սահմանադրության 66-րդ հոդվածում այդ մասին նշված է. «Բոլոր նրանք, ովքեր ունեն Թուրքիայի քաղաքացիություն, թուրք են» («Türk Devletine vatandaşlık bağı ile bağlı olan herkes Türktür»<sup>2</sup>): Այստեղից կարելի է հետևության հանգել, որ «Türk» բառը էթնոսից վեր է դասվում: Այդ դեպքում ի՞նչ է նշանակում «ներքին ինքնություն». այն, ըստ Բ. Օրանի, մարդու պատկանելությունն է որևէ այլ էթնիկական խմբի: Այստեղ նա նկատել է տալիս, որ անձն իր էթնիկական ծագումը պետք է պաշտպանի, բացեիքաց դրսևորի իր ազգային առանձնահատկությունները և չպետք է միայն տվյալ երկրի թելադրած, պարտադրած ազգային ինքնությունն ընդունի<sup>3</sup>:

Հ. Դինքը նույնպես անդրադառնում է «երկու ինքնությունների» թեմային, սակայն այլ կտրվածքով. ըստ նրա՝ թուրքահայը այսօր կանգնած է ինքնության երկվության առաջ և երկու ինքնություն ու երկու գիտակցություն կրող է: Թեև նա թուրքաբնակ է, Թուրքիայի Հանրապետության քաղաքացի, սակայն ծագումով հայ է, նա Թուրքիայի հայկական համայնքի մասնիկն է, միևնույն ժամանակ բարոյապես Հայաստանի և Սփյուռքի մասնիկն է: Ազգային և քաղաքացիական ինքնությունների տարբերակման գիտակցումից բխած իր խոսքերը հաճախ ուղղվում էին իր իսկ դեմ՝ որպես ազգի կամ պետության դավաճանի: Նման գնահատականը արդյունք էր երկու ժողովուրդների և երկու երկրների որոշակի գաղափարական դիրքորոշումների: Ի վերջո նա տալիս է այդ վիճակի թեկուզ փոքր-ինչ կոպիտ, սակայն դիպուկ գնահատականը. «Հայերն իրենց հոգեխեղման, իսկ թուրքերը մտազարության ախտանիշներով հիվանդներ են»<sup>4</sup>: Նա, սակայն, առաջարկում է իր սեփական օրինակով այդ երկու ինքնությունների միջև ներդաշնակություն ստեղծել. «Երկու ինքնութիւններս, զորս երբեք փոխելու նպատակ չունիմ եւ հակառակ անոր որ ահաւոր ցաւ մը եւ նաեւ պատիւ կ'զգամ անոնց տէր ըլլալով, աւելցնեմ որ յաջողած եմ այդ զոյգ ինքնութիւններու միջեւ ներդաշնակ միասնութիւն մը ստեղծելու»<sup>5</sup>:

Քննարկվող թեմայի շրջանակներում Հ. Դինքը անդրադառնում է թուրքահայերի և հայաստանաբնակ հայերի, ինչպես նաև թուրքահայ-սփյուռքահայ-հայաստանցի եռանկյունու քաղաքական, հոգեբանական բարդ խնդիրներին: Նա և «Ակօս»-ը առանձին-առանձին են դասակարգում և դիտարկում Հայաստանի հայերի, սփյուռքահայերի և թուրքահայերի պարագաները, քանի որ յուրաքանչյուրն ունի իրեն հատուկ տարբերակիչ հատկանիշներ:

<sup>1</sup> **Oran B.**, Hortumlama ve Uluslararası Kynescilik // “Agos”, 21.12.2001.

<sup>2</sup> <http://www.tbmm.gov.tr/anayasa/anayasa82.htm>

<sup>3</sup> Ավելի մանրամասն տե՛ս **Oran B.**, Alevilerde bölücü sayıldı ya.pes! // “Agos”, 22.02.2002, Oran B. Lâhasümüt // “Agos”, 14.01.2005:

<sup>4</sup> Տե՛ս **Dink H.**, Ermeni kimliği üzerine (6) Ermeninin “Türk”ü // “Agos”, 23.01.2004:

<sup>5</sup> «Ֆրանսայի ճարպիկութիւնը» // «Ակօս», 9.02.2001:

Հ. Դինքը նաև նկատել է տալիս, որ սփյուռքահայերը, անկասկած, հոգեխեղման ամենաճանր վիճակում են գտնվում: Պատմությունը և պատմության թողած հոգեվիճակները թե՛ թուրքերի և թե՛ հայերի մեջ անառողջ և անհանգիստ են: Երկկողմ մոտեցումներում հակառակ կողմը «խորթ» է, և այդ «խորթությունը» անխուսափելի գոյավիճակ է:

Խոսելով «սփյուռքահայ» եզրույթի սահմանների մասին՝ Հ. Դինքը նշում է, որ գոյություն ունի անկախ հայկական պետություն, որն աշխարհի բոլոր հայերի մայր հայրենիքն է: Իսկ դրա սահմաններից դուրս բնակվող հայերը Հայկական Սփյուռքն են: Սակայն նա նկատել է տալիս, որ թուրքաբնակ հայերի պարագայում նույնպիսի բնորոշում հնարավոր չէ տալ: Այս դեպքում, ինչպես նա է նշում, իրականությունը ճիշտ չի արտացոլվի. թուրքաբնակ հային սփյուռքահայ համարելը սխալ է<sup>1</sup>:

Հայկական Սփյուռքի համար թուրքը շարունակում է մնալ պատմության այդ նույն թուրքը, որը չի փոխվում: Հ. Դինքը մեծ արձագանքի արժանացած հոդվածներից մեկում կոչում էր սփյուռքահայերին «մաքրել իրենց արյունը թուրքերի հանդեպ ունեցած ատելությունից»: Սակայն քանի դեռ Թուրքիան չի ճանաչել Հայոց ցեղասպանությունը, ավելին՝ շարունակում է այն ժխտել, ցեղասպանության հարցը մնալու է սփյուռքահայի ինքնության կարևորագույն բաղադրիչը. «Ես ո՞ր կե կու գամ մայրիկ» հարցումով՝ Սփյուռքահայուն ինքնութեան որոնումը բաւարար պատճառ մըն է՝ անոր մօտաւոր անցեալին պատահած Ցեղասպանութեամբ հետաքրքրուելու համար: Եթէ նոյնիսկ մենք չխոսինք կամ մեր զուակներուն չպատմենք, օր մը անհատը ի՞նքը պիտի ուզէ ատիկա: Երբ պրպտելով ամէն ինչ երեսն կու գայ, հոգեվիճակը կը վիրաւորուի: Ասիկա՝ այնպիսի հոգեբանութիւն մըն է որ, զայն բուն ձեւաւորողը, կիւր բռնաբարող մարդը, փոխանակ իր արարքին մասին զոջում յայտնելով խոստովանելու, ընդհակառակն կը պնդէ, թէ ի՞նքը բռնաբարուած է կնոջ կողմէ»<sup>2</sup>: Իսկ հայաստանցիների համար ոչ միայն թուրքն է պատմական թշնամի, այլև Թուրքիան է այնպիսի պետություն, որը տարիներ շարունակ շրջափակել է Հայաստանի Հանրապետությունը, և տնտեսական դժվարությունները էլ ավելի են մեծացրել հակակրանքը նրա հանդեպ<sup>3</sup>:

Հ. Դինքը «Ակօս»-ի էջերում բացում է նաև մեկ այլ արդիական և կրկին հայկական ինքնության հետ առնչվող թեմա՝ հայերի բնիկ լինելը և «Թուրքիայից հողային պահանջատիրությունը»: Թեև այս հարցերի շուրջ նրա

---

<sup>1</sup> **Dink H.**, Define Tarifi // “Agos”, 18.02.2000, Diaspora'nın köyü (1) // “Agos”, 7.04.2000, Diaspora'nın köyü (2) // “Agos”, 14.04.2000, Yeni kavramlara doğru // “Agos”, 22.02.2002, Diaspora kaplumbağaları // “Agos”, 1.03.2002, Acıyı sırtlayıp onurla taşımak // “Agos”, 5.04.2002, Himayelerinden kurtulmak // “Agos”, 19.04.2002, Diaspora Bakanlığı // “Agos”, 8.05.2002.

\* Ի դեպ, այս արտահայտությունը ևս պատճառ դարձավ Հ. Դինքի նկատմամբ պետական և հասարակական հավաճանքների ու դատական գործ հարուցելու:

<sup>2</sup> «Ո՞ր հարցումով սկսինք» // «Ակօս», 5.04.2002:

<sup>3</sup> Տե՛ս **Dink H.**, İki yakın halk iki uzak komşu, İstanbul, 2008, s. 3-4:

տեսակետները Թուրքիայում տարածված հիվանդագին ընկալումները կոտրելու միտում ունեն և որոշ կետերում տարբերվում են հայաստանյան և սփյուռքյան տեսակետներից, այնուամենայնիվ կարևոր են:

«Ակօս»-ում ինքնության թեմայի շուրջ ուսումնասիրությունները հետզհետե դառնում էին ավելի համարձակ՝ վերածվելով և՛ թուրքական իշխանությունների, և՛ նրանց արբանյակների մտահոգության առարկա: Սակայն այդ թեմայի շրջանակներում ամենաաղմկահարույց բացահայտում-ուսումնասիրությունը առնչվում է Թուրքիայի խորհրդանիշներից մեկին՝ առաջին կին ռազմական օդաչու և հանրապետության հիմնադիր Մուստաֆա Քեմալ Աթաթուրքի որդեգիր աղջկան՝ Մաբիհա Գյոքչենին: 2004 թ. փետրվարի 6-ին «Ակօս»-ում լույս է տեսնում Հ. Դինքի և Տիրան Լոքմագոջյանի հոդվածը՝ «Մաբիհա Գյոքչենի գաղտնիքը» վերստառությամբ<sup>1</sup>: Հոդվածում հեղինակները բացահայտում են, որ թուրքական ամենակարևոր խորհրդանիշներից մեկը, որը նաև թուրք ազգայնականության ոգեշնչման աղբյուրներից էր, իրականում Հայոց ցեղասպանության որբուհիներից է՝ Խաթուն Սեբիլջյան անունով, ում Մուսթաֆա Քեմալը որդեգրել է և տվել ռազմական կրթություն: Հ. Դինքը և Տ. Լոքմագոջյանը գտել էին Խաթուն Սեբիլջյան-Գյոքչենի հայաստանաբնակ ազգականներին, ովքեր մի շարք մանրամասներ էին պատմել լեզենդար օդաչուի և նրա ինքնության մասին: Հոդվածն օրեր անց արտատպվել է նաև թուրքական մամուլում և դարձել Թուրքիայի՝ այդ օրերի հասարակական-քաղաքական օրակարգի թիվ մեկ նյութը: Այս առիթով քննադատությամբ հանդես եկան բազմաթիվ քաղաքական գործիչներ, պաշտոնյաներ, անգամ Թուրքիայի զինված ուժերի գլխավոր շտաբը պաշտոնական հայտարարություն տարածեց, որտեղ ասված էր՝ այդ հոդվածն ուղղված է թուրքական պետականության հիմնասյուների դեմ: Հարկ է հատկապես առանձնացնել այն, որ կտրուկ հայտարարությամբ հանդես եկան ծայրահեղ ազգայնամոլական կուսակցություններն ու կազմակերպությունները. «Ակօս»-ի առջև տեղի ունեցավ «գորշ գայլերի» բազմամարդ բողոքի հանրահավաք, որտեղ բացահայտ ասվեց. «Դի նք, դու մեր թիրախն ես»: Կան հիմնավոր կարծիքներ, որ հենց այդ հոդվածը նրա համար ճակատագրական եղավ, քանի որ նա դրանով անդրադառնում էր թուրքական կեղծ և պարտադրված ինքնությանը, որի խարխլումը միանշանակ վտանգում է պետականությունը: Ի վերջո 2007 թ. հունվարի 19-ին հենց վերոնշյալ ծայրահեղական կազմակերպությունների երիտասարդ անդամների կողմից Հրանտ Դինքը սպանվեց:

Այսպիսով, հայ ինքնության որակների պահպանման և տեսական քննության փորձը «Ակօս» պարբերաթերթում նորովի մոտեցումներով է դրսևորվում: Կարելի է ասել, որ այն հստակ ծրագրային ուղղությամբ համարձակ

---

<sup>1</sup> Dink H., Lokmagözyan T. Sabiha Hatun'un Sırrı // "Agos", 6.02.2004.